# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՏԿԵՆ-ԳՀԱՇՁԲ-2021/5Շ

ք. Երևան

«10» 09 2021թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Ա. Ազատյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Շանթ-Սերյան ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ղուկասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Մ10, Սևան-Մարտունի-Գետափ կմ57+450-կմ59+450 հատվածի մայթերի կառուցման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն Հավելված N 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

### 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **3 (երեք) տարին**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.4.12 Պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը, օգտագործելով սույն պայմանագրի հավելված N 1.1 ով սահմանված ռեսուրսները:

3.4.13 Պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից ...

պատճենները՝ համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **18 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի մճարում [illegible]

համար կատարված աշխատանքների ընդուն[illegible]

վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 64 254 000 (վաթսունչորս միլիոն երկու հարյուր հիսունչորս հազար) ՀՀ դրամ, որից 10 709 000 (տասը միլիոն յոթ հարյուր ինը հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Սույն պայմանագրի 3.4.12 և 3.4.13 կետերով սահմանված պայմանների կիրառման դեպքում, եթե ներկայացված տեղեկատվությունը գնահատվում է սահմանված պահանջներին համապատասխանող, ապա ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով կապալառուին փոխհատուցվում է պայմանագրի գնի 1 տոկոսը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

---

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի [illegible]

ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[35]

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղարի փոխարինող
Ա. Մելքոնյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Շանթ-Սեյրան» ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, Վաղաշեն համայնք, նախկին օդանավակայանի տարածք 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Ալաշկերտի մ/6
ՀՀ 11500989208000
ՀՎՀՀ 08205134
տնօրեն
Ա. Ղուկասյան
/ստորագրություն/
Կ.Տ

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված թիվ 1
«10» 09 2021թ. կնքված
ՏԿԵՆ-ԳՀԱՇՁԲ-2021/5Շ ծածկագրով պայմանագրի

# ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ
## ՉԱՓԱԲԱԺԻՆ 1
## ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
## Մ10, Սևան-Մարտունի-Գետափ կմ57+450-կմ59+450 հատվածի մայթերի կառուցման աշխատանքների

ՀՀ հազար դրամ

| NN | Աշխատանքների անվանումը | Չափման միավոր | Քանակ | Միավորի արժեքը | Ընդհանուր արժեքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 3 | 5 | 6 | 7 | 8 |
| | **I. Նախապատրաստական աշխատանքներ** | | | | |
| | Գոյություն ունեցող d=0.53/2մ կիսախողովակների ապամոնտաժում և նույնի վերատեղադրում կմ58+483-կմ58+513 և կմ58+563-կմ58+581 | | | | |
| 1 | 10e-IV կարգի բնահողի մշակում ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 3.5կմ | մ³ | 7.6 | 7.138 | 54.2488 |
| 2 | 10e-IV կարգի բնահողի մշակում ձեռքով, կողքի կուտակում հետադարձ լիցքի համար | մ³ | 6.4 | 7.176 | 45.9264 |
| 3 | Ավազակոպճային շերտ h=10սմ | մ³ | 2.4 | 6.003 | 14.4072 |
| 4 | Գոյություն ունեցող d=0.53/2մ կիսախողովակների ապամոնտաժում և նույնի վերատեղադրում (1գծմ=45.145 կգ) | գծմ | 48 | 5.554 | 266.592 |
| | Էլեկտրահաղորդման գծերի տեղափոխում | | | | |
| 1 | П-1 միջանկյալ հենասյուն (ե/բ կանգնակ СВ95-2; 0.3 մ³, 800կգ) ապամոնտաժում և նույնի մոնտաժում | հատ | 3 | 24.745 | 74.235 |
| 2 | АВВГ 4x16 օդային մալուխի ապամոնտաժում և նույնի մոնտաժում | գծմ | 80 | 0.305 | 24.4 |
| 3 | 10e IV-րդ կարգի գրունտի քանդում ձեռքով | մ³ | 1.3 | 5.249 | 6.8237 |
| 4 | 10e IV-րդ կարգի գրունտի փորում հորատումով (Ø450մմ) | գծմ | 5.4 | 1.89 | 10.206 |
| 5 | Հետադարձ լիցք ձեռքով | մ³ | 1.3 | 1.861 | 2.4193 |
| | | | | **Ընդամենը I** | **499.258** |
| | **II. Կողային առուներ** | | | | |
| 1 | Կողային առուների իրականացում 10e-IV կարգի բնահողում էքս 0.65մ³ 2.տ., բարձում տեղափոխում լցակույտ 3.5կմ | մ³ | 121 | 2.004 | 242.484 |
| 2 | Կողային առուների իրականացում10e-IV կարգի բնահողում ձեռքով, բարձում տեղափոխում լցակույտ 3.5կմ միջին հեռ. | մ³ | 13 | 7.186 | 93.418 |
| | | | | **Ընդամենը II** | **335.902** |
| | **III. Իջատեղեր և մուտքեր** | | | | |
| 1 | Գոյություն ունեցող ա/բ ծածկի քանդում հետահար մուրճով h=4սմ, բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 3.5կմ | մ² | 34.5 | 0.334 | 11.523 |
| 2 | 10e-IV կարգի բնահողի մշակում և բարձում ա/ի էքս. 0.65մ³ 2.տ. և տեղափոխում լցակույտ 3.5կմ | մ³ | 12.6 | 1.718 | 21.647 |
| | Երթևեկելի մաս | | | | |
| 1 | "Б" տիպի մանրահատիկ խիտ տաք ա/բ h=4սմ | մ² | 171.5 | 4.2 | 720.300 |
| 2 | Խճավազային հիմք C-5 h=12սմ<br>խիճ (40-70)- 10% - 1,56մ³<br>խիճ (20-40)- 35% - 5.46մ³<br>խիճ (10-20)- 20% - 3.12մ³<br>խիճ (5-10)- 10% - 1.56մ³ | մ² | 171.5 | 1.336 | 229.124 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | խիճ (0-5)- ավազ 25% - 3.9մ$^3$<br>ջուր-1.1մ$^3$ | | | | |
| | Մետաղական խողովակներ Ø 426մմ | | | | |
| 1 | Ավազակոպճային շերտ h=10սմ (մետ. խող. տակ) | մ$^3$ | 2.29 | 6.012 | 13.767 |
| 2 | Մետ. խողովակների Ø 426x5մմ տեղադրում | գծմ | 54 | 62.316 | 3365.064 |
| 3 | Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով) | գծմ | 49.2 | 2.624 | 129.101 |
| 4 | Միաձույլ բետոնե B-20 գլխամասեր | մ$^3$ | 6.4 | 104.973 | 671.827 |
| 5 | Գլխամասերի ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով) | մ$^2$ | 24 | 1.431 | 34.344 |
| | Մետաղական խողովակներ Ø 630մմ | | | | |
| 1 | Ավազակոպճային շերտ h=10սմ (մետ. խող. տակ) | մ$^3$ | 0.23 | 6.012 | 1.383 |
| 2 | Մետ. խողովակների Ø 630x7մմ տեղադրում | գծմ | 3 | 151.161 | 453.483 |
| 3 | Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով) | գծմ | 2.4 | 3.913 | 9.391 |
| 4 | Միաձույլ բետոնե B-20 գլխամասեր | մ$^3$ | 1.0 | 104.973 | 104.973 |
| 5 | Գլխամասերի ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով) | մ$^2$ | 3.2 | 1.431 | 4.579 |
| | | | | **Ընդամենը III** | **5770.506** |
| | **IV. Մայթեր** | | | | |
| 1 | 10e-IV կարգի բնահողի մշակում և բարձում ա/ի էքս. 0.65մ$^3$ 2.տ. տեղափոխում լցակույտ 3.5կմ | մ$^3$ | 40 | 1.861 | 74.44 |
| 2 | 10e-IV կարգի բնահողի մշակում էքս. 0.65մ$^3$ 2.տ. , կողքի կուտակում հետադարձ լիցքի համար | մ$^3$ | 121 | 0.716 | 86.636 |
| 3 | 10e-IV կարգի բնահողի մշակում ձեռքով, կողքի կուտակում հետադարձ լիցքի համար | մ$^3$ | 98 | 5.172 | 506.856 |
| 4 | Հետադարձ լիցք բուլդոզերով | մ$^3$ | 77 | 0.926 | 71.302 |
| 5 | Հետադարձ լիցք ձեռքով | մ$^3$ | 142 | 2.004 | 284.568 |
| 6 | Բազալտե 15x30սմ եզրաքարի տեղադրում<br>- միաձույլ բետոն B-15 1գծմ-0.035մ$^3$<br>- ավազակոպճային շերտ h=5սմ-0.0125մ$^3$ | գծմ | 1711,9 | 12.597 | 21564.8 |
| 7 | Բետոնե սալիկ ձևավոր, մոխրագույն h=6սմ | մ$^2$ | 2376,6 | 8.112 | 19278.98 |
| 8 | Ավազային շերտ h=9սմ | մ$^2$ | 2376,6 | 0.813 | 1932.176 |
| 9 | Б տիպի մանրահատիկ ա/բ h=3սմ | մ$^2$ | 18 | 3.531 | 63.558 |
| 10 | Միաձույլ B-20 բետոնե եզրաշար 15x30սմ<br>- ավազակոպճային շերտ h=5սմ, 1գծմ-0.0075մ$^3$ | գծմ | 1403 | 3.34 | 4686.02 |
| 11 | Միաձույլ B-20 բետոնե եզրաշար 20x40սմ<br>- ավազակոպճային շերտ h=5սմ, 1գծմ-0.01մ$^3$ | գծմ | 352 | 5.058 | 1780.416 |
| 12 | Միաձույլ B-20 բետոնե եզրաշար 20x50սմ<br>- ավազակոպճային շերտ h=5սմ, 1գծմ-0.01մ$^4$ | գծմ | 101 | 7.157 | 722.857 |
| 13 | Միաձույլ B-20 բետոնե եզրաշար 20x60սմ<br>- ավազակոպճային շերտ h=5սմ, 1գծմ-0.01մ$^4$ | գծմ | 32 | 8.016 | 256.512 |
| 14 | Միաձույլ B-20 բետոնե եզրաշար 25x80սմ<br>- ավազակոպճային շերտ h=5սմ, 1գծմ-0.0125մ$^5$ | գծմ | 28 | 13.551 | 379.428 |
| 15 | Մետաղական բազրիքի տեղադրում<br>105.35գծմ /43 սեկցիա | հատ/տ | 43 | 34.069 | 1464.967 |
| | | | | **Ընդամենը IV** | **53153.519** |
| | **V Ջրընդունիչներ և մետ. ցանց (իջատեղեր)** | | | | |
| 1 | 10eIV կարգի բնահողի քանդում էքս.0,65մ$^3$ 2.տ.բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 3.5կմ | մ$^3$ | 14.84 | 1.861 | 27.617 |
| 2 | Նույնը կողքի կուտակումով հետադարձ լիցքի համար | մ$^3$ | 4.24 | 0.668 | 2.832 |
| 3 | Ավազակոպճային շերտ h=10սմ | մ$^3$ | 3.71 | 6.108 | 22.661 |
| 4 | Միաձույլ ե/բետոն B-20 | մ$^3$ | 6.36 | 104.973 | 667.628 |
| 5 | ամրան Æ 12մմ Ac-500 1գծմ-0,888կգ | կգ | 563.39 | 0.496 | 279.441 |
| 6 | ամրան Æ 8մմ Ac-I 1գծմ-0,395կգ | կգ | 104.94 | 0.763 | 80.069 |
| 7 | Մետաղական ցանց | կգ | 3078.24 | 0.906 | 2788.885 |
| 11 | Քսվածքային ջրամեկուսացում | մ$^2$ | 40.28 | 1.431 | 57.641 |
| 12 | Հետլիցք ձեռքով | մ$^3$ | 4.24 | 1.861 | 7.891 |
| | | | | **Ընդամենը V** | **3934.666** |
| | **VI. Ջրհորներ** | | | | |
| 1 | Հող. աշխատանքներ փոսորակների փորման համար ձեռքի աշխատանքով բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 3.5 կմ միջին հեռ. | մ$^3$ | 2.7 | 7.444 | 20.099 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | Հող. աշխատանքներ փոսորակների փորման համար ձեռքի աշխատանքով կողքի վրա կուտակելով հետադարձ լիցքի համար | մ3 | 2.7 | 5.249 | 14.172 |
| 3 | Ավազակոպճային նախապ. h=10սմ | մ3 | 0.18 | 6.012 | 1.082 |
| 4 | Ավազային շերտ h=10սմ խողովակի տակ | մ3 | 0.65 | 6.012 | 3.908 |
| 5 | Ավազային լիցք պոլիէթիլենային խողովակի վրա | մ3 | 0.99 | 6.776 | 6.708 |
| 6 | Ջրհորի կառուցում միաձույլ բետոնից B 20, F100 | մ3 | 0.54 | 88.273 | 47.667 |
| 7 | Պոլիէթիլենային ծալքավոր խողովակի տեղադրում d=150մմ SN4 | գծմ | 22.5 | 6.631 | 149.199 |
| 8 | Քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով բետոն | մ2 | 6.30 | 1.431 | 9.015 |
| 9 | Հետադարձ լիցք ձեռքի աշխատանքով | մ3 | 2.7 | 1.861 | 5.025 |
| 10 | Մետաղական ցանցի պատրաստում և տեղադրում | կգ | 153.1 | 0.907 | 138.862 |
| | | | | **Ընդամենը VI** | **395.737** |
| | **VII. Ճանապարհային նշաններ** | | | | |
| 1 | Գոյություն ունեցող ճան. նշանների ապամոնտաժում, բարձում տեղափոխում 1կմ միջին հեռ. պատվիրատուի կողմից հատկացված տարածք, պահեստավորում | հատ | 4 | 4.96 | 19.84 |
| 2 | Պահեստավորված նշանների բարձում տեղափոխում 1կմ միջին հեռ տեղադրում | հատ | 4 | 7.157 | 28.628 |
| 3 | Միաձույլ բետոնե հիմք B-15 | մ3 | 0.42 | 51.055 | 21.4431 |
| | | | | **Ընդամենը VII** | **69.911** |
| | **VIII. Արգելափակոցներ** | | | | |
| 1 | Պոլիմերային ուղղորդ սյուների (C-1) ապամոնտաժում, վերադարձ սեփականատիրոջը | հատ | 24 | 3.78 | 90.72 |
| 2 | Ե/բ սյուների ապամոնտաժում, վերադարձ սեփականատիրոջը | հատ | 1 | 3.78 | 3.78 |
| | | | | **Ընդամենը VIII** | **94.5** |
| | | | | **Ընդհանուրը** | **64254.0** |

*Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» և ԱԱՀ-ն՝ 20%

**Կապալառուն աշխատանքները կատարում է

Չափաբաժին 1՝ Մ10, Սևան-Մարտունի-Գետափ կմ57+450-կմ59+450 հատվածում:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղարի փոխարինող
Ա. Սիմոնյան
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Շանթ-Սեյրան» ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, Վաղաշեն համայնք, նախկին օդանավակայանի տարածք 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Ալաշկերտի մ/6
ՀՀ 11500989208000
ՀՎՀՀ 08205134
տնօրեն
Ա. Ղուկասյան
/ստորագրություն/

*Հավելված N 1.1*
*« 10 » 09 2021թ. կնքված*
*ՏԿԵՆ-ԳՀԱՇՁԲ-2021/5Շ ծածկագրով պայմանագրի*

ՑԱՆԿ

հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման

| Չափաբաժին N՝ 1 | | | |
|---|---|---|---|
| **Օգտագործվելիք նյութերի** | | | Աշխատակիցների քանակը, որոնց միջոցով պետք է ապահովվի պայմանագրի կատարումը |
| **Անվանում** | **Քանակ** | **Գումար/դրամ** | |
| | | | 25 |
| | | | |
| | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղարին փոխարինող
Ա. Ադամյան
/ստորագրություն/

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Շանթ-Սեյրան» ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, Վաղաշեն համայնք, նախկին օդանավակայանի տարածք 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Ալաշկերտի մ/ճ
ՀՀ 11500989208000
ՀՎՀՀ 08205134
տնօրեն
Ա. Ղուկասյան
/ստորագրություն/

*Հավելված թիվ 2*
*« 10 » 09 2021թ. կնքված*
*ՏԿԵՆ-ԳՀԱՇՁԲ-2021/5Շ ծածկագրով պայմանագրի*

**ՁԱՓԱԲԱԺԻՆ 1**
**ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ**
**Մ10, Սևան-Մարտունի-Գետափ կմ57+450-կմ59+450 հատվածի մայթերի կառուցման աշխատանքների**

| No | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 0 | Լաբորատոր փորձարկումներ | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 80 օր հետո |
| 1 | Նախապատրաստական աշխատանքներ | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օր հետո |
| 2 | Կողային առուներ | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 35 օր հետո |
| 3 | Իջատեղեր և մուտքեր | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո | ֆինանսական միջոցներ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 75 օր հետո |
| 4 | Ջրընդունիչներ և մետ. ցանց (իջատեղեր) | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 45 օր հետո |
| 5 | Մայթեր | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 70 օր հետո |
| 6 | Ջրհորներ | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 40 օր հետո |
| 7 | Ճանապարհային նշաններ | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 75 օր հետո |
| 8 | Արգելափակոցներ | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 75 օր հետո |
| **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ** | | **ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո** | **ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 80 օր հետո, բայց ոչ ուշ, քան ֆինանսական միջոցներ նախատեսվելու տարվա նոյեմբերի 30-ը** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղարին փոխարինող
Ա. Ազարյան
/ստորագրություն/

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Շանթ-Սեյրան» ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, Վաղաշեն համայնք, նախկին օդանավակայանի տարածք 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Ալաշկերտի մ/ճ
ՀՀ 11500989208000
ՀՎՀՀ 08205134
տնօրեն
Ա. Ղուկասյան
/ստորագրություն/

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով [illegible], ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետը [illegible] ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում [illegible]*

Հավելված N 3
«10» 09 2021թ. կնքված
ՏԿԵՆ-ԳՀԱՇՁԲ-2021/5Շ ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | ՀՀ դրամ |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45231177/584 | ճանապարհների վերանորոգման աշխատանքներ | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղարի փոխարինող
Ա. Ազարյան
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Շանթ-Սեյրան» ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, Վաղաշեն համայնք, նախկին օդանավակայանի տարածք 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Ալաշկերտի մ/6
ՀՀ 11500989208000
ՀՎՀՀ 08205134
տնօրեն
Ա. Ղուկասյան
/ստորագրություն/

Հավելված թիվ 4
« 10 » 09 2021թ. կնքված
ՏԿԵՆ-ԳՀԱՇՁԲ-2021/5Շ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

______________________

______________________

գտնվելու վայրը ______________

հհ ______________________

հվհհ ______________________

Պատվիրատու

______________________

______________________

գտնվելու վայրը ______________

հհ______________________

հվհհ______________________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 4.1*
*« 10 » 09 2021թ. կնքված*
*ՏԿԵՆ-ԳՀԱՇՁԲ-2021/5Շ ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ____________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ________________-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ____________________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը Նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն